ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «16» 09 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 10

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 119-րդ հոդվածի 1-ին պարբերության, 227-րդ հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի պահանջներով,

հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի 2022 սեպտեմբերի 2-ի թիվ 20-2039 գրությամբ Քաղաքացիական ավիացիայի կոմիտե ուղարկված «Իռ Աերո» Էյրլայնզ բաժնետիրական ավիանընկերության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 769 չվերթի օդանավի անձնակազմի կողմից կազմված՝ օդանավում ուղևորների կողմից կատարած փոխադրման կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությունը, «Արմենիա միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերության «Զվարթնոց» Մ/Օ ավիացիոն անվտանգության ծառայության կողմից կազմված՝ անցագրային և ներօբյեկտային վերահսկողության կանոնների խախտման վերաբերյալ թիվ 27 արձանագրությունը, ինչպես նաև «Ավիաբուժ» ՓԲԸ կողմից կատարված սթափության վիճակի զննության՝ թիվ 44 և 45 արձանագրությունները,

հաշվի առնելով, որ Օրենսգրքով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Քաղաքացիական ավիացիայի կոմիտեում անցկացված լսումների

ընթացքում Սայադ Վազգենի Մեսրոբյանը և Գևորգ Գագիկի Մարտիրոսյանը հաստատել են նախքան օդանավ մտնելը և օդանավում ոգելից խմիչքի օգտագործման փաստը,

Օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 6-րդ, 7-րդ և 8-րդ գլուխների պահանջների համաձայն՝

Որոշեցի.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ՝

1) Սայադ Վազգենի Մեսրոբյանի /ք. Երևան, Նորագավիթ 9փ., 65տ., ՀՀ անձնագիր BA3647218 տրված՝ 24.11.2022թ.-ին, 223 կողմից/ նկատմամբ նշանակել տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,

2) Գևորգ Գագիկի Մարտիրոսյանի /ք. Երևան, Նորագավիթ 1փ., 155տ., ՀՀ անձնագիր BA3648196 տրված՝ 24.11.2022թ.-ին, 223 կողմից/ նկատմամբ նշանակել տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Տուգանքը պետք է վճարվի Կենտրոնական գանձապետարանի 900005240461 հաշվեհամարին՝ սույն որոշումը սահմանված կարգով Սայադ Վազգենի Մեսրոբյանին և Գևորգ Գագիկի Մարտիրոսյանին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ